ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 14 հունվարի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Վ. Պողոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Լեւոն Պողոսյանի անհատական դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Քաղաքացի Լեւոն Պողոսյանը 25.12.2012թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի, 207-րդ հոդվածի 1-ին ու 6-րդ մասերի, 213-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ նույն հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերի սահմանադրականությունը:

2. Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասը եւ 207-րդ հոդվածի 1-ին մասն անորոշ են, չեն երաշխավորում անձի՝ դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, հետեւաբար, այդ նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին: Դիմողը նաեւ նշում է, որ «... բողոքարկման ժամկետի լրանալու պահը նույնպես անորոշ է, քանի որ պարզ չէ, դատարանը ժամկետի լրանալը պայմանավորում է «հրապարակելու պահից» դրույթով, թե հենց նույն 213-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի հստակ եւ հասկանալի «դատարանի որոշումը ստանալուց հետո» դրույթով»:

3. Դիմումի, ինչպես նաեւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը չի սպառել դատական պաշտպանության միջոցները, քանի որ դիմողը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետի

խախտմամբ, եւ ՀՀ վերաքննիչ դատարանը մատնանշել է, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալուց հետո եւ այն չի պարունակում ժամկետի բացթողումը հարգելի համարելու եւ ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն: Այսինքն՝ դիմողը չի օգտագործել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված բոլոր իրավական հնարավորությունները, մասնավորապես՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու իր իրավունքը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող է դիմել՝ «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴԱՈ-21 որոշման համաձայն՝ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու իրավասու սուբյեկտ չէ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Լեւոն Պողոսյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

14 հունվարի 2013 թվականի
ՍԴԴԿՈ/2-2